

«ՄԱՅՐԵՆԻԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՈՒՍՈՒՑԻ՛Ց



Ավանդույթը չխախտելով՝ Ռոստովի մարզի հայագիտական առարկաների ուսուցիչներն իրենց մասնագիտական տոնը նշում են համայնքում: Ուսուցիչներին շնորհավորում է համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը:

Ուսուցիչը կրթական համակարգի սիրտն է: Միդնի Հուք

Սկսած 1994 թ.-ից՝ աշխարհի շուրջ հարյուր երկրներում, այդ թվում Հայաստանում և Ռուսաստանում հոկտեմբերի 5-ը նշվում է որպես Ուսուցչի միջազգային

օր: Այս օրը տոն է բոլորիս համար. չէ՞ որ յուրաքանչյուրս էլ ունեցել ենք ուսուցիչներ, ամեն մեկս էլ յուրահատուկ սիրով ու երախտագիտությամբ է հիշում գոնե մի ուսուցչի, որը մեր կյանքում ունեցել է ճակատագրական նշանակություն փոխելով մեր աշխարհայացքն ու կյանքի ընկալումը:

Ո՛վ է ուսուցիչը: Մեկը, որ սովորեցնում է սեփական օրինակով տալով ոչ միայն հանրագիտարանային ճշմարտություններ, այլև սովորեցնում է ճանաչել չարն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը, ճիշտն ու սխալը: Ուսուցիչը կրթում է երեխայի միտքն ու սիրտը, նպաստում նրա աշխարհայացքի ձևավորմանը, նրա առջև բացում գիտության ու գրականության խորհրդավոր դռները, աշակերտին սովորեցնում զարմանալ միևնույն ժամանակ նույնը սովորելով նաև նրանից:

Ուսուցիչը սովորեցնում է ամենակարևորը՝ սովորել, սերմանում սովորելու, նորն իմանալու ցանկություն, իսկ «առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի» (Մաադի):

Այսօր դժվար է սփյուռքի ուսուցչի գործը, քանի որ նա պետք է լուծի ոչ միայն հայերենի ուսուցման, այլ նաև հայապահպանության խնդիրը:

Կրթությունը հաջողության բանալին է, իսկ գաղտնիք չէ, որ փոքրիկ բանալին կարող է բացել հսկայական դռներ: Այն նաև գենք է, գենք՝ աշխարհը փոխելու, այն ապրելու ու արարելու համար ավելի լավ վայր դարձնելու համար:

Մեկ անգամ ևս շնորհավորենք ու շնորհակալություն հայտնենք, մեծարենք ուսուցիչներին մաղթելով, որ կյանքում նրանց թևերը ոչ ոք չկտրի, որ նրանց միտքը մինչև խոր ծերություն լինի պայծառ, իսկ աչքը ամենատես:

ՄՓՑՈՒՈՒՔԱՆՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ

Հայկական երգն է հնչում,
Մարտական պարն է թնդում,
Ներքին բուռն հուզմունքից
Խնդում է սիրտս, հրճվում:
Ինչ ուզում է թող լինի,
Հայը՝ միշտ հայ կմնա,
Որ երկրում էլ, որ ապրի,
Ինչ հաց էլ, որ նա ուտի,
Միևնույն է իր ոգին
Նա կենդանի կպահի:
Ա՛խ, ի՛նչ անեմ քույրիկներ,
Շատ եմ ցավում եղբայրներ,
Որ մեր բախտը այս ահեղ,
Մեզ աշխարհով է սփռել:
Հայրենիքից հեռացած՝
Դուք ձգտում եք ու ջանում,
Որ հայը միշտ հայ մնա,
Այս անիրավ աշխարհում:
Դուք միշտ եղել եք բարի,
Աստված բարին կատարի:
Անձնվեր գործ եք անում:
Հայ մանուկին կրթելով,
Նրա միտքը հարթելով՝
Հայրությունը եք պահպանում:
Իմ սիրելի քույրիկներ,
Իմ քաջարի եղբայրներ,
Դասավանդեք Մայրենին,
Ամուր պահեք Հայրենին:

Շողիկ ՄԻՄՎՈՆՅԱՆ

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Փուռի սամսան շերտավոր խմորով ու մսային հյութեղ միջուկով պատրաստվող կարկանդակ է: Երեխաները հաճույքով լսեցին դոնահայերի խոհանոցի գաղտնիք-

ները ներկայացնող թանգարանի աշխատակցին, դիտեցին տեսահոլովակ, այնուհետև մեծ ոգևորությամբ սկսեցին պատրաստել փուռի սամսան: Վերջում՝ երե-



Հոկտեմբերի 9-ին Դոնի Ռոստովի հայերենի խմբակների աշակերտներն՝ իրենց ուսուցիչներին հետ, (Ռոստովի թիվ 61 դպրոց, ուսուցչուհի՝ Արմինե Հովսեփյան, թիվ 110 դպրոց, ուսուցչուհի՝ Շովինար Մարգարյան, թիվ 107 դպրոց, Սուրբ Խաչի կիրակնօրյա դպրոց, ուսուցչուհի՝ Արմինե Ղազարյան) այցելեցին Մյանսիկյանի շքր-ջանի Զալթո գյուղի պատմա-ազգագրական թանգարան՝ մասնակցելու «Դոնահայերի ազգային խոհանոցը» թեմայով վարպետության դասին: Թանգարանի աշխատակիցները ներկայացրեցին դոնահայերի խոհանոցի առանձնահատկությունները և անչափ հետաքրքիր վարպետական փուռի սամսա կարկանդակի պատրաստման վարպետության դասը:



խաներն իրենց ձեռքով պատրաստած կարկանդակը համտեսեցին:

Հայկական ազգային խոհանոցից հավաքյալ պատրաստման վարպետության դասն անցկացրեց Զալթոյի թիվ 1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի Հռիփսիմե Վարդևանյանը:

Հավան հրուշակեղենի տեսակ է: Տեսքի պայմաններում պատրաստում են յուղի մեջ բոված ցորենալյուրից վրան լցնելով դոշաբ, շաքարաջուր կամ մեղրաջուր: Երեխաները, մեծ ոգևորությամբ, սիրով պատրաստեցին քաղցրավենիքը, նկարագրեցին ու համտեսեցին:

Շնորհակալություն թանգարանի աշխատակիցներին, Զալթոյի թիվ 1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհիներ Հռիփսիմե Վարդևանյանին և Ռսկեհատ Դոլդբայանին՝ անչափ հետաքրքիր ու զվարճալի դասեր կազմակերպելու համար: